ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի՛ ուսուցիչներ, սիրելի՛ շրջանավարտներ,

Համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու և անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ ձեր կյանքի ամենալուսավոր ու հիշարժան օրվա՝ Վերջին զանգի կապակցությամբ:

Սիրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք հրաժեշտ եք տալիս հարազատ կրթօջախներին և բացում եք նոր հորիզոններ, դեպի իրական ու մեծ կյանք, դեպի պատասխանատվություն ու ապագա, ուստի այս պահին շատ կարևոր է, որ դուք գիտակցեք և բարձր գնահատեք գիտելիքի ու հետագա ուսումնառության ստացման կարևորագույն դերը ձեր հետագա կյանքում:

Հարգարժա՛ն մանկավարժներ, իմ խորին երախտիքը ձեզ , որ այս տարիների ընթացքում դուք ջանք ու եռանդ չեք խնայել ձեր սաների կրթության ու դաստիարակության գործում և անմնացորդ նրանց եք փոխանցել ձեր գիտելիքներն ու հմտությունները, եղել եք նրանց համար ավագ ընկեր և լավագույն խորհրդատու:

Սիրելի՛ շրջանավարտներ, կրկին շնորհավորելով ձեզ, ձեր ծնողներին և ուսուցիչներին այս հանդիսավոր օրվա առթիվ, մաղթում եմ ձեզ հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ բոլոր բարի ու նվիրական նախաձեռնություններում:

Վստահ եմ, որ դուք դառնալու եք մեր երկրի արժանավոր քաղաքացիներ ու մշտապես բարձր եք պահելու հարազատ դպրոցի և մեր համայնքի պատիվը:

Բարի երթ ու կանաչ ճանապարհ ձեզ դեպի նոր կյանք...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ